ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

HANRAPETUTYUN PARTY

ՀԿ , HP

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ >> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ(2025-2030 թթ)

Ծրագրի հիմքում ընկած են համայնքի առջեւ ծառացած խնդիրները , որոնք պահանջում են ԱՐԱԳ լուծում ՆԵՐԿԱՅՈՒՄ,
Պահանջում են ԱՆՑՅԱԼԻ վերանայում եւ գնահատականներ ,
Պահանջում են ռազմավարական հստակություն ԱՊԱԳԱՅԻ համար:

🚩 Ծրագրի սխեման `մարտահրավեր -կարճաժամկետ (արագ) լուծում -երկարաժամկետ(կայուն) լուծում հաջորդականությունն է :

🚩 Հիմնական ռազմավարական ուղղություն՝
Բուն Էջմիածին քաղաքի + Զվարթնոց ,Ոսկեհատ , Խոյ համայնքի 17 `Աղավնատուն, Ամբերդ, Այգեշատ, Արագած, Արշալույս, Գեղակերտ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Ծաղկալանջ, Ծաղկունք, Ծիածան, Հայթաղ, Հովտամեջ, Մոնթեավան (Շահումյան Թ/Ֆ), Մրգաստան և Շահումյան բնակավայրերի խոշորացման հետեւանքով առաջ եկած բազմաշերտ խնդիրները վերհանելու ,կառավարելու եւ լուծելու,համայնքապետարանի գերծանրաբեռնվածությունը խոշորացման հետեւանքով նվազեցնելու համար համայնքապետի անձնական ենթակայության տակ ստեղծել <<Համայնքի խոշորացման խնդիրները կարգավորող ժամանակավոր կոմիտե >> :

📍 Համայնքի գլխավոր մարտահրավերը համարում ենք կոռուպցիան :

Մեր թիմը , համայնքապետարանի կառավարումը ստանձնելու պարագայում անմիջապես ստեղծելու է `

✔️ <<Համայնքային որոշումների մոնիթորինգի և վերլուծության հանձնաժողով>>,որը վերլուծության է ենթարկելու վերջին 20 տարվա ավագանու նիստերի որոշումներն ու արձանագրությունները :

🔻 Հանրայնացվելու են բոլոր այն որոշումները, որոնք ունեն սոցիալ-տնտեսական մեծ ազդեցություն , կամ քաղաքական -հասարակական հնչեղություն (օր.՝ համայնքապատկան հողերի վաճառքը, շինարարական թույլտվությունները, համայնքային ունեցվածքի տնօրինումը, ներկայումս եկեղեցապատկան համարվող, բայց անմշակ ու անխնամ թողնված տարածքների օտարման իրավաչափությունը եւ այլն):

🔻 Ներգրավելու ենք անկախ փորձագետներ մոնիթորինգի գործընթացին:

🔻 Հրապարակելու ենք տարեկան հաշվետվություն մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ:

✔️ Ստեղծելու ենք ավագանու ենթակառույց՝

<<Համայնքային որոշումների վերահսկողության և թափանցիկության հատուկ հանձնաժողով>>,որի կազմում կլինեն ավագանու անդամներ, անկախ իրավաբաններ, հաշվապահներ , հասարակական ներկայացուցիչներ:

🔻 Բացահայտելու ենք համայնքային շահի ոտնահարումները , հնարավոր խոշոր չարաշահումները, շահերի բախումները, ոչ նպատակային ծախսեր:

🔻 Թափանցիկ ենք դարձնելու համայնքի գույքի, հողերի և ֆինանսների կառավարման գործընթացը:

🔻 Վերականգնելու ենք կորսված հանրային վստահությունը համայնքային կառավարման նկատմամբ:

✔️ Ստեղծելու ենք <<Քաղաքաշինական վերահսկողության և օրինականացման վարչություն>> հաստատելու համար քաղաքաշինական կարգուկանոն ,
Ապօրինի շինությունների հարցը լուծվելու է ոչ թե պատժողական ,այլ արդարացի , համակարգային , փուլային մոտեցմամբ :
Լինելու է թափանցիկություն և կանխատեսելիություն շինարարական ոլորտում:
Մեր թիմի կառավարման դեպքում գործելու է

✔️ <<Կոռուպցիայի կանխարգելման եւ կոռուպցիոն ռիսկերի կառավարման գրասենյակ >> ,որը պարտավոր կլինի տարեկան հրապարակել հակակոռուպցիոն հաշվետվություն և առաջարկություններ ավագանու համար:
Ամեն վեց ամիսը մեկ համայնքապետը հրավիրելու է բաց ասուլիս , հրավիրելու է մեդիայի ներկայացուցիչներին, պատասխանելու է համայնքի զարգացման եւ խնդիրների վերաբերյալ բոլոր հարցերին:
Գործարկվելու է `

✔️ <<Վաղարշապատի բաց բյուջե >> հարթակը համայնքի բյուջեի մուտքերի ու ելքերի(եկամուտներ /ծախսեր) ամբողջական հրապարակմամբ
եւ

✔️ <<Բաց նամակ համայնքապետին>> համակարգը , որի միջոցով քաղաքացիները կկիսվեն իրենց բողոքներով եւ առաջարկություններով :

📍 Մարտահրավերը `աշխատատեղերի պակաս , տնտեսական կանգ
✓ Համայնքում գործելու է <<Համայնքապետարանին կից ներդրումային գրասենյակ>>,որտեղ կներկայացվի ազատ հողատարածքները ,արտադրամասերը ,
շենքերը ,կկազմվեն ներդրումային ծրագրեր ,կկատարվեն շուկայի ուսումնասիրություն,իրավական խորհրդատվություն, ռիսկերի գնահատում , համայնքի բնակիչների վերապատրաստման ծրագրեր ,կկազմվեն անվճար <<ստարտ-ափ>> ծրագրեր մանր եւ միջին բիզնեսի սկսնակների համար :

✔️ Համայնքը պիտի գործի
<<ներդրումը =աշխատատեղ>> սկզբունքով , այսինքն նախապատվություն պիտի տա այն ներդրողին, ով նվազագույնը 5 նոր աշխատատեղ կստեղծի համայնքիի բնակիչների համար :

🔻 Ներդրողների համար պիտի նվազեցվի վարչարարությունը,ավելորդ թղթաբանությունը,գործեն հարկային եւ այլ արտոնություններ:

📍 Մարտահրավեր ՝ ենթակառուցվածքների մաշվածություն

🔻 Կատարել ենթակառուցվածքների մաշվածության գնահատում ,

🔻 Ենթակառուցվածքների մաշվածության փուլային կարգավորում ,

🔻 Խնդիրներին տալ կարճաժամկետ,օպերատիվ լուծումներ, ապա ՝ երկարաժամկետ կայուն լուծումներ:

🔸 Օր.՝ Ջրամատակարարում եւ կոյուղի
Հին ջրագծեր, խափանումներ, որակի խնդիր

🔻 Կարճաժամկետ լուծում ՝ հանգույցների և խափանված հատվածների վերանորոգում,

🔻 Երկարաժամկետ լուծում ՝ արդիականացման ծրագրեր ամբողջ քաղաքում, նոր ջրագծերի կառուցում, ջրի մատակարարման ավտոմատացված հսկողություն,թարմ ջրի և կոյուղու հոսքերի թեստավորում և թարմացում՝ ջրի որակի վերահսկմամբ:

🔸 Ճանապարհային(տրանսպորտային ցանց)

🔻 Կարճաժամկետ լուծում ՝առաջնահերթ փողոցների վերանորոգում,գլխավոր փողոցների, բնակավայրերի ներսի և գյուղական ճանապարհների վերանորոգում և ասֆալտապատում,հանրային տրանսպորտի երթուղիների օպտիմալացում, նոր երթուղային գծեր՝ մարզական և կրթական կենտրոնների հանգուցմամբ:

🔻 Երկարատեւ լուծում ՝նոր ճանապարհային նախագիծ ՝ սմարթ սիթի(խելացի քաղաք) տրամաբանությամբ , հանրային տրանսպորտի քանակի եւ սպասարկման խնդրի լուծում էկո սիթի (էկոլոգիական քաղաք) տրամաբանությամբ:

Լուսավորություն 🔸

🔻 Կարճաժամկետ լուծում ՝փոխարինել ոչ աշխատող լույսերը էներգախնայող LED լուսատուներով,
Վերականգնել կամ ավելացնել լուսավորությունը մանկական հրապարակներում, զբոսայգիներում և հասարակական կենտրոններում:
Տեղադրել ժամանակավոր արևային լուսատուներ փողոցներում և հանրային տարածքներում՝ ծախսերի կրճատման նպատակով:

🔻 Երկարաժամկետ լուծում ՝Smart Lighting համակարգի ներդրում (ամբողջական լուսավորության խելացի համակարգ):

📍 Մարտահրավեր ՝ Թափառող շներ

🔻 Կարճաժամկետ լուծում ՝կատարել բոլոր թափառող շների վակցինացիա, ախտահանություն և վնասազերծում՝ բռնության բացառմամբ:

Ստեղծել բազա՝ կերակրման և առողջության հսկողության համար: Թափառող շների ժամանակավոր պահեստավորում :

🔻 Երկարաժամկետ լուծում `
Ստեղծել կայուն և ժամանակակից շների ապաստան, որտեղ կենդանիները կստանան խնամք ,իսկ հնարավորության դեպքում կվաճառվեն կամ կմատակարարվեն սոցիալական ընտանիքների:
Ապահովել միկրոչիպավորում և գրանցում, որպեսզի բոլոր շները լինեն հաշվառված ,իսկ աճի դինամիկան վերահսկելի :

📍 Մարտահրավեր ` Համայնքի անվտանգություն

🔻 Ավելացնել համայնքային ոստիկանության և պարեկային ծառայությունների տեսանելիությունը:

🔻 Տեղադրել թվային կառավարվող տեսախցիկների ցանց, որոնք կապահովեն արագ արձագանք ոստիկանության հետ:

🔻 Միասնական տեսահսկման համակարգ , համայնքապետ-համայնքային ոստիկանություն համագործակցության իրացում :

📍 Մարտահրավեր ` առողջապահական խնդիրներ
Հիմնական լուծում `

🔻 Կայուն համայնքային առողջապահական համակարգ՝ էլեկտրոնային հիվանդանոցային գրանցումներ, հեռաբժշկություն և հանրային առողջության մոնիթորինգ:

🔻 Նոր բժշկական կենտրոնների և գյուղական բուժկետերի կառուցում, որոնք ապահովված են ժամանակակից տեխնիկայով:

🔻 Կայուն մոբայլ բուժկետային ցանց գյուղական բնակավայրերում:

📍 Մարտահրավեր՝
կրթություն-մշակույթ-տուրիզմ ,
Համատեղում եւ զարգացում

✔️ Համայնքը ընդգրկել համաշխարհային կրթական, մշակութային և զբոսաշրջային ցանցերին:

🔻 Ստեղծել կենտրոններ ` կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների եւ նրանց ծնողների աջակցության համար ,որտեղ երեխաները կստանան անհրաժեշտ մասնագիտական օգնություն , ծնողները ` հոգեբանական , մարդկային , ֆիզիկական աջակցություն , ներառական ծնողավարման մասին անվճար խորհրդատվություն:

🔻 Նոր մշակութային կենտրոնների և ստուդիաների կառուցում, որոնք կներառեն երաժշտական, գեղարվեստական և թատերական կորպուսներ :

🔻 Մշակութային ժառանգության թվայնացում՝ առցանց ցուցադրություններ և կրթական հարթակներ ստեղծելով:

📍 Մարտահրավեր ` կանաչ տարածքների/այգիների պակաս

🔻 Կարճատեւ լուծում `հիմնական այգիների և զբոսայգիների վերանորոգում՝ (նստարաններ, լուսավորություն, աղբաման տարրական էլեմենտներով) ,

🔻 Քաղաքային փողոցների և թաղամասերի ծառատունկ՝ արագ գործող, տեղական կլիմային հարմարված տեսակներով:

🔻 Հասարակական մասնակցություն՝ համայնքային ծառատունկի կամ հողագործական փոքր նախագծերի միջոցով:

🔻 Երկարաժամկետ լուծում `
Նոր կանաչ տարածքների և այգիների կառուցում՝ երեխաների և երիտասարդների համար `խաղահրապարակներով, սպորտային և ժամանցային վայրերով:

🔻 Կանաչ գոտիների և զբոսայգիների ինտեգրումը Smart City լուծումների հետ՝ էկո-հսկողություն, սենսորներով ջրմուղ- համակարգ և լուսավորության ավտոմատացում `հիմքում ունենալով եվրոպական մի շարք խելացի քաղաքների մոդելը :

📍 Մարտահրավեր `ժամանցային վայրերի մտահոգիչ պակաս

🔻 Կարճատեւ լուծում `վերանորոգել գործող զբոսայգիները, խաղահրապարակները և մարզադաշտերը:

🔻 Տեղադրել բազմաֆունկցիոնալ սարքավորումներ՝ սպորտային և խաղային տարածքներում:

🔻 Հասարակական մշակութային միջոցառումներ՝ բացօթյա կինոէկրաններ, համերգներ և արվեստի ցուցադրություններ:

🔻 Երկարաժամկետ լուծում `նոր ժամանցի համալիրների կառուցում՝ ներառելով երիտասարդների, երեխաների և ընտանիքների համար բազմաֆունկցիոնալ տարածքներ:

✔️ Smart City ինտեգրացիա՝ թվային վահանակներ և հավելվածներ, որոնք տեղեկացնում են միջոցառումների, ժամանցի վայրերի և երթուղիների մասին:

🚩 Հիմնական ռազմավարական ուղղություն
Էջմիածինը դարձնել Հայաստանի Հանրապետության առաջին խելացի -էկոլոգիական քաղաքը `փուլային լուծումների տարբերակով

- Արևային պանելներ՝ վարչական շենքերի ,համայնքապատկան այլ շենքերի եւ դպրոցների տանիքներին,
- Կանաչ տրանսպորտային ցանց՝ հեծանվային ուղիների ստեղծում,էլեկտրական ավտոբուսների ձեռքբերման մեկնարկ ,ինչպես նաեւ էլեկտրոմոբիլների լիցքավորիչ-կայանների շարունակական տեղադրում
- Քաղաքային կանաչ գոտիների ընդլայնում՝ ամեն տարի `<<մեկ մարդ +1 ծառ>> սկզբունքով ,
- Զբոսաշրջային սմարթ ուղեցույցներ՝ պատմական վայրերի համար :
- Խելացի կայանման համակարգ հատուկ հավելվածի միջոցով:
- Օդի աղտոտվածության համար խելացի սենսորների տեղադրում ամբողջ համայնքում օդի որակի մշտական չափման համար,
- Հեծանվային և էլեկտրական սկուտերների վարձույթ՝ ներքաղաքային միկրոմոբիլության համար:

☑ Մարտահրավերների առաջ երբեք չենք ծնկելու , որովհետեւ ամեն ինչ ԼԱՎԱ ԼԻՆԵԼՈՒ...

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ПАРТИЯ
PARTY